

մահէն կլախնաս. ընտանիքիս վերայ հոգ տար. ես կմեռնիմ քս փոխարէն » : Նորան նոյն վայրկեանին կտրատեցին :

Շատ բան կան, որ մեք թէպէտեւ իբրեւ բարբարոսութիւն կդիտենք՝ բայց վայրենիներին համար անհրաժեշտ պէտք են : Օրինակ, Աւստրալիացիներն իւրեանց ծծկեր որդիները մեռած մայրերին հետ կթաղեն, բայց այս այն պատճառով է, որ հնար չունին նոցա կեանքը պահպանելու : Հնդիկ խեղճ ցեղերը երբ թափառելու պիտի ելնեն՝ իւրեանց տկար ծերերը քաղցածութեամբ մեռնելու կգատեն, եւ այս բանս կպահանջեն նոյն իսկ ծերերը, որ իւրեանց ազգականներին եւ մերձաւորներին հրաժեշտի ողջոյն կուտան սրտածմիկ ոճերով եւ ձեւերով : Հիւսիսային Գերմանիայում, այն տեղերն, ուր Վենգերը կբնակէին, մանր անտառներ կան, որոնք «Արտասուաց» անունը կկրեն, աւանդութիւն կայ, թէ այդ տեղերում որդիներն կսպանէին եւ կթաղէին իւրեանց ծնողներին, որոնք այլ եւս ծերութենէ չէին կարող աշխատիլ : Պրոկոպիոս կասէ թէ՝ հերուները ծերերին կայրէին, եւ նոցա կնիկները պէտքէ իսկոյն անյայտանային, ապա թէ ոչ՝ նախատանք կենթարկուէին, Տիւրինգիացիներն իւրեանց հիւանդները կգլխատէին, եւ յետոյ կայրէին : Հոլլ Ամերիկացին այսպիսի սովորութեան հետքը գտաւ նաեւ Գրենլանդիայում 1860 ին : Նորա աչքի առջեւ էսկիմոսները մի մահացու հիւանդ կին սառույցէ խրճիթի մէջ գրին, եւ մորթերով պատեցին, մի քիչ կերակուր թողին եւ յետոյ գուռը սառույցով գոցեցին, որպէս զի թշուառու հին առանձնութեան մէջ հոգին փչէ : Հոլլ խրճիթը բացեց եւ հիւանդի մօտ կեցաւ մինչեւ նորա մեռնելը :

Գ. Ճէժ Ա. Լապլանի ուսմանը .

Ս. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ .

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ .

(Շտրասն-է-Բէ-ն, Արարտ 1881 Սեպտեմբ) :

Բժիշկ Պատերի Ժանտախտային պատուաստի նորագոյն փորձերի հետեւանքը եւ նրանց նշանակութիւնը սիրիական աստի վերաբերումիւ (сибирская язва) :

Այս տարուայ անցեալ Սեպտեմբեր ամսում մենք ծանօթացրինք Արարատ ամսագրի ընթերցողներին Տուլուզայի ուսուցչա-

պետ Թուսսենի ժանտախտային պատուաստի փորձերի հետ։ Թուսսեն ենթարկեց ժանտախտային թոյնը (ժանտախտից ստանալած անասունի վարակուած, այսինքն ժանտախտային ժրժմունքներով լցուած արիւնը 10 րոպէի չափ) 35 աստիճան ջերմութեան գործողութեան։ Ժանտախտային թոյնը օգային թթուաստի ազդեցութեան տակ, որ սպանումէ ժանտախտային ժժմունքներ, մինչեւ այն աստիճան կորցնումէր իւր առաջին թունաւոր յատկութիւնները, նրա աւերիչ գործողութեան գործութիւնը՝ կենդանական գործարանների վրայ՝ այն աստիճան թուլանումէր, որ նրան կարելի էր բոլորովին աներկիւղ ներս ածել առողջ անասունի արիւնի մէջ։ Արդարեւ թոյնը ներս ածելով առողջ անասունի արիւնի մէջ, նա յառաջ էր բերում նրա առողջութեանը փոքր ինչ րօպէական խանգարումն, անասունի մէջ յայտնվումէին ժանտախտային վարակման թեթեւ նշաններ, բայց այդ նշանները շուտով անհետանումէին եւ յէին թողնում ամենափոքր վատնգի նշոյլ։ Նրա կենաց համար։ Մէկ խօսքով թուլացրած, անօրայրած ժանտախտային թոյնը անասունի գործարանների վրա երեւացնումէր նոյնպիսի գործողութիւն, ինչպիսին երեւումէ մարդու զգայարանքների վրայ ծաղկի պատուաստելով։ Արանից բնականապէս ծագեց այն խնդիրը թէ՛ այս անօրայրած, թուլացրած ժանտախտային թոյնը ժանտախտային խնդրի վերաբերութեամբ չունի՞ արդեօք նոյն իսկ նախապահպանողական նշանակութիւնը, որն ունի նախապահպանողական կոչուած ծաղկի պատուաստը «Զաղկի» ցաւի խոցերի վերաբերութեամբ։ Այս խնդիրը լուծելու համար Թուսսեն արեց քանի մի փորձեր, որոնք գրականապէս յաջողեցան խնդիրը հաստատապէս լուծելու։ Նա ժանտախտային խոցերի պատուաստին ենթարկեց անասուններ, որոնք կամ բոլորովին կորցնումէին ժանտախտային թոյնով վարակուելու ընդունակութիւնը, կամ, եթէ վարակվում էլ էին նրանով, բայց միայն թոյլ աստիճանով։ Չհաւատացողների համար՝ թէպէտ այդ փորձերը բաւական համոզողական չերեւցան եւ նրանք ստիպումէին վերաստուգել եւ կրկնել այդ փորձերը աւելի ընդարձակ չափով։ Թուսսենի ստացած հետեւանքը, լիապէս հաստատեցին առհասարակ վարակիչ ցաւերի համար Պաստերի արած տեսութիւնը եւ մասնաւորապէս նրա ժանտախտային թոյնի մասին արած հետազո-

առևթիւնները: Պատերը արդէն քանի մի տարի առաջ նախագուշակումէր եւ ապացուցանում ժանտախտի պատուաստելու կարելիութիւնը: « Ժանտախտային թոյնի թուլացրած իւրաքանչիւր կաթիլը, ասումէր նա գիտութեան ճեմարանի մէջ, դեռ անցեալ տարւոյ փետրուար ամսում, ունի նշանակութիւն առաւել սաստիկ կաթիլի (սակաւիկ թուլացրածի) վերաբերութեամբ, ինչպէս նախապահպանողական ծաղիկի մէջ: Եւ ինձ թուումէ թէ՛ գրանց մէջ հեշտ է գտնել զանազան աստիճանի թուլացրած կաթիլներ, նոյնպէս եւ այնպիսին, որը ներս ածելով ոչխարների, կովերի, ձիերի արիւնի մէջ, թէպէտ կենթարկի նրանց թեթեւ ժանտախտային տենդի, բայց ապագայ ժամանակում նրանց կապահովէր ժանտախտից — անպայման մահացու ջաւից: Թուսսենին արգարեւ յաջողեցաւ, ինչպէս երեւումէ, հնարել այդ պարտած նախապահպանողական ժանտախտային թոյնը: Բայց մեծ ինչպէս արդէն ասացինք, այդ գիւտը ոչ միայն հնամուլ գիւղատնտեսների, այլ եւ ուսեալ մարդկանց մէջ հանդիպեցաւ ոչ բոլորովին վստահութեան: Մեխլենի գիւղատնտեսական ընկերութիւնը դիմեց Պատերին խնդրելով նոր փորձեր անել ժանտախտային պատուաստի ընկերութեան ներքոյ, որ տալիս էր նրա տնօրէնութեանը 60 հատ զանազան սեռի: Հասակի եւ տեսակի անասուններ: Վերջը փորձերին մեծ նշանակութիւն տալու համար, ոչխարների մի մասը փոխուեցաւ այծերով եւ կովերով: Վարդապրուեցան ենթարկել կրկնակի ժանտախտային պատուաստի 25 ոչխար. առաջին եւ երկրորդ պատուաստի մէջ պէտք է անցնէր մինչեւ երկու շաբաթ միջոց. թոյնը՝ որ կպատուաստուի առաջին անգամ, պէտքէ լինի առաւել թոյլ այն թոյնից, որ կպատուաստուի երկրորդ անգամ: Մնացած ոչխարները բոլորովին չպիտի ենթարկուէին պատուաստի: Յետոյ թէ պատուաստի ենթարկուած եւ թէ չենթարկուած անասունների արեան մէջ պէտք էր ներս ածել չթուլացրած, սաստիկ ներգործող ժանտախտային թոյն: Պատերը հէնց փորձի սկզբում նախագուշակեց թէ՛ այն ոչխարները՝ որոնք ենթարկուած չեն ժանտախտային պատուաստի, կստատակին ժանտախտից բոլորը. ընդհակառակն այն ոչխարները՝ որոնց վրայ կպատուաստուի ժանտախտային թոյնը, կմնան կենդանի եւ անվնաս: Փորձերը սկսուեցան ներկայ տարւոյս

Մայիսի 5-ին՝ Այգ օրը հոքնայով (спринцовка) ներս ածեցին ամենաթոյլ ժանտախտային թոյնի հնգական կաթիլ 24 ոչխարի, այծերի եւ 6 կովերի արեան մէջ։ Մայիսի 17 ժանտախտային պատուաստի գործողութիւնը նորից սկսաւ, բայց ներս ածած թոյնն անգամ փոքր ինչ սաստիկ էր առաջուանից։ Մայիսի 31-ին թէ այգ պատուաստած ոչխարների, կովերի եւ այծերի, եւ թէ պատուաստի չենթարկուած 24 ոչխարի, այծերի եւ 4 կովի արեան մէջ ներս ածեցին չթուլացրած սաստիկ ներգործող ժանտախտային թարախ լցուած ժանտախտային ժժմունքների սաղմերով, որ պահվում էր 1877 թվականի Մարտ ամսից Պատերի քիմիական արհեստանոցում։ Յունիսի 2 ստացուեցան փորձի հետեւանքները։ Բոլոր անասունները, որոնց վրա պատուաստուեցաւ ժանտախտը՝ մնացին կենդանի եւ առողջ բացի մէկ կովից։ Սակայն կովի անգամահատական զննութիւնից երեւեցաւ թէ՛ նրա մահուան պատճառը բոլորովին ժանտախտային թոյնը չէր, այլ պատահական հանգամանքը — նրա արգանդի մէջ մեռած հորթն էր։ Քսանեւինն անասուններից, որոնք ենթարկուած չէին պատուաստի, 27ը ստակեցան ժանտախտի խոցերից մինչեւ Յուլիոսի 20. եւ 2 հասն էլ նոյն օրում։ Այսպէս Պատերի գուշակութիւնը ճշտութիւնով կատարուեց, ժանտախտի պատուաստելը կատարելապէս արդարացրեց նրա վրա դրած անպայման յոյսը։ Պէտք չէ անգամ ասել որ՝ թէ ուսումնական շրջաններում՝ եւ թէ՛ գիւղատնտեսականների մէջ ինչպիսի՛ սաստիկ տպաւորութիւն արտադրեցին այգ փորձերի հետեւանքները։ «Այժմ՝ մենք կարող ենք ստուգութիւնով հաստատել, այսպէս վերջացրեց Պատեր իւր հաշիւը այգ փորձերի մասին, գիտութեանց ճեմարանի մէջ կարգալով, որ մենք վերջապէս ունինք այնպիսի նախապահպանողական ժանտախտային սնկիկներ (ժժմունք, գեռուն), որոնք չլինելով ինքն լուծուող, մահաբեր, նախապահպանում են մահաբեր ժանտախտից, Այգ սնկիկները կարելի է պատրաստել շատ զանազան տեսակ եւ տեղափոխել առանց այլայլելու։ Աւելելով ժանտախտային սնկիկ, մենք կարող ենք արուեստական կերպով փոխել նրան ի «սնկիկ նախապահպանողական», որ կպահպանէ մահացու ժանտախտից վարակուելուց։ Աւրեմն մենք կարող ենք պատրաստել մեր արուեստանոցներում (laboratoria) նախա-

սրահարանողական ժանտախտային թոյն, եւ այս մասին վերջինս ունի աւելի վճռողական առաւելութիւն քան նախապահարանողական ծաղիկ պատուաստի թոյնը, որը չի կարող (կամ գոնէ մինչեւ այժմ կարելի չելաւ) պատրաստուիլ արհեստական կերպով:

Բայց ինչպէս կարող են պատուաստել ժանտախտային սընկիկներ: Կատարեալ այնպէս, ինչպէս հաւի — խօլերայի համար սնկիկներ են պատրաստում: զանազան հեղուկների մէջ, առաւելապէս մէղի մէջ, որը ինչպէս Պաստերի փորձերը ցոյց տուին, վերին աստիճանի նպաստումէ սնկիկի բազմանալուն: Ենթարկելով մէղը աւելի կամ պակաս օդային թթւութիւնի սաստիկ գործողութեանը՝ մենք կարող ենք ստանալ ժանտախտային սնկիկի զանազան տեսակները, սրոնք մէկը միւսից ջնջելու մէջ ոչ միայն իւրեանց թունաւորութեան աստիճանով, այլ եւ իւրեանց ձեւերով:

Արհեստական կերպով պատրաստած ժանտախտային սնկիկը, որի շնորհիւ մենք այժմ կարող ենք մահաբեր սնկիկը դարձնել՝ ժանտախտով ի մահ վարակելուց նախապահարանողական միջոց, անկարծիք, մերձակայ ապագայում, ցոյց կտայ մեզ եւ ուրիշ ոչ պակաս վսեմ ծառայութիւն, նա կտայ մեզ հնարաւորութիւն, դիւրին ճանապարհով, բացատրել եւ սահմանել այն պայմանները, որոնք կնպաստեն առհասարակ ժանտախտային սնկիկների չբազմանալուն, ինչպէս եւ մասնաւորապէս նրանց առաւել թունաւորութեան զարգացման առաջը առնելուն: Մինչեւ ցայժմ այդ պայմանները համարեալ թէ բոլորովին հետազոտուած չեն: Յայտնի է, զորօրինակ, որ ժանտախտային սնկիկը զարգանում է երբեմն լեռնային արօտատեղերում: Ինչպէս Ուիլքին լեռնատեղերում ժանտախտը այնպէս սովորական եւ ծանօթ հիւր է, որ ստացել է այնտեղ լւր առանձին «լեռնային հիւանդութիւն անունը»: Ըստ տիրապետող կարծեաց՝ այդ հիւանդութեան պատճառը խոտն է, որով սնանուած անասունը եւ որը իբր թէ՛ նպաստումէ ժանտախտային սնկիկի բազմանալուն: Բայց եւ նոյնպէս նկատուած է, որ մի եւ նոյն խոտը մի քանի լեռների վրայ լինումէ անասունի համար մահաբեր կերակուր, իսկ միւս լեռների—անվնաս: Ինչո՞ւ համար մեկ դէպքում նա նպաստումէ ժանտախտային սնկիկի զարգանալուն, իսկ միւս

դէպքերում ընդհակառկը. այս հարցը մնում է անլուծաճանելի: Ժանտախտային սնկիկի արօտատեղերում երեւելու եւ դարգանալու, իբրեւ գլխաւոր պատճառներից իբրեւ մինը, Պաստեր ցոյց է տալիս հոգի մէջ գտնուող որդը, որ Ժանտախտային սնկիկի սաղմը տեղափոխում է այն տեղերի չորս կողմը, ուր թաղուած են եղել Ժանտախտից սատակած անասուններ. Բայց թէպէտ Պաստերի այդ կարծիքը ունի բաւական շատ փաստեր, սակայն այնուամենայնիւ կարծիքը համարվում է դեռ ենթադրութիւն՝ կարօտ ապացուցութիւնների եւ հմուտ վերաստուգութեան:

Այդ վերաստուգելու օգտի համար, Պաստեր եւ նրա Ժանտախտային պատուաստի գիտակ աշխատակիցները—Բու եւ Շամբերլէն—որոշեցին հետազօտել այն անասունների գիականները, որոնք սատակել էին Ժանտախտից Մելիւնի փորձերի մէջ: Այդ գիականները թաղուած էին նրանց խորհրդով մէկ բաւական խոր փորքիկ հողաբաժնի մէջ, որ խնամով շրջապատուած եւ պաշտպանուած էր սահմանակից տեղերից: Ղրանների թաղելուց մէկ տարի յետոյ, այսինքն եկող տարւայ Մայիսի վերջում, այդ Ժանտախտից սատակած կենդանիների գերեզմանատունը կիսթուսի արօտատեղի առողջ անասունների համար: Մելիւնի գիւղատընտեսական ընկերութիւնը դարձեալ կղոհէ գիտութեան օգտի համար մէկ քանի տասը ոչխարներ, կովեր եւ այծեր: Մէկ մասը այդ կենդանիների պիտի արած են Ժանտախտային գերեզմանատանը, իսկ միւս մասը փորք ինչ տարածութիւնով նրանից հեռու, այն տեղում, որ երբէք չի եղել Ժանտախտից վարակուած գիականների գերեզմանատուն: Փորձի համար գործ կաժուին եւ ոչ մի անգամ Ժանտախտային պատուաստի ենթարկած առողջ անասուններ: Եւ ինչ վիճակի կհանգիստին այդ անասունները, այն մենք կիմանանք միայն մէկ տարուանից յետոյ: Բայց եթէ Պաստերի ենթադրութիւնը այս անգամն էլ ճշմարտութիւն եւ եթէ այդ նոր փորձն էլ տայ նոյնքան հաստատ հետեւանքներ, ինչպէս եւ Ժանտախտային պատուաստի փորձը, այն Ժամանակ կստանանք հնար ոչ միայն առաջուց Ժանտախտի մահաբերելը, հեռացնելու, որը տուել է մեզ Ժանտախտային պատուաստը, այլ, ի հարկէ միայն յայտնի դէպքերում, կտայ մեզ կարողութիւն հեռացնել նախապէս նրա նոյն իսկ ծագումը եւ տարածվիլը: Մինչեւ ցայժմ անասնաբուութիւնը (ветеринария) ցոյց է

տալիս ժանտախտով վարակուած դիակների խոր թաղելու վրայ ինչպէս ամենից աւելի ճիշտ միջոցի վերայ ժանտախտի չտարած-վելու համար: Բայց եթէ գետնի սրղը կամ ճճին անգաղար գուրս է հանում այդ ախտը գետնի տակից հողի երեսը, ուստի ակներեւ է թէ՛ սրբոսն ժանտախտից սատակածների դիակները խոր թաղուէին, ժանտախտային սնկիկի սաղմը շուտ թէ ուշ, բայց անպատճառ, գուրս կգտց գէպի լոյս, եւ ախտը՝ որ առ-ժամանակ իբր հանգարակ էր՝ վերստին կերեւայ եւ կսկսի ջարդել ու կոտորել սաստկապէս: Հենց այն պատճառաւ՝ որ Պատտերի ենթադրութիւնը ճշմարիտ երեւի, պէտք կլինի ըն-դունել թէ՛ միայն ժանտախտով վարակուած դիակների խոր թաղիլը կատարելապէս բաւական չէ ժանտախտի տարածման առաջուց առաջն առնելու համար: (այսինքն ազգարարել կան-խապէս) եւ թէ՛ այդ նպատակին հասնելու միակ ազդու եւ յու-սալի միջոց պէտք է համարել, կամ ժանտախտով վարակուած անասունների դիակները իսպառ այրել, կամ թէ՛ ուր այդ այ-րելը որ եւ իցէ անյաղթելի դժուարութիւնների հանդիպի՝ մաքրել նրանց՝ շատ ու քիչ նրանցում ժվժվացող ժանտախ-տային որդերից եւ նրանց սաղմերից՝ արդէն յայտնի քիմիական կամ ֆիզիքական գեղորայքով:

Բայց ամեն գէպքում, երբ այժմեան խնդիրը կայանումէ նրանում թէ՛ ինչ պայմաններ կարող են նպաստել կամ դիմա-դրել ժանտախտային որդի զարգանալուն եւ բազմանալուն, ա-նասնաբուժութիւնից նշանակած ոչ մի միջոց չի կարող հա-մարուիլ ո՛չ կատարելապէս յուսալի ո՛չ կատարելապէս ամբողջա-ցած՝ ժանտախտի ծալմանն ու տարածմանը առաջն առնելու համար: Ուստի ներկայ ժամանակում ժանտախտի սկսելուն պէս թէ մէկ եւ թէ միւսում տեղում, բոլոր մասնաւոր անձինք եւ ընկերական հաստատութիւնք, որոնց պարտքն է թէ իւրեանց անձնական եւ թէ հասարակական օգտի համար հոգալ անա-սունների կեանքի եւ առողջութեան մասին, պէտք է գլխաւո-րապէս իւրեանց ուշադրութիւնն ու ճիգը դարձնեն, որքան կա-րելի է, ժանտախտային պատուաստը ամենայն տեղ տարածելու վերայ: Գիտութիւնը մինչեւ ցայժմ մեզ չի ցոյց տուել ժան-տախտը կանխապէս արգելելու աներկբայելի եւ անսխալ միջոց-ներ եւ կերպեր, բայց նրա փոխանակ տուել է մեզ կարողութիւն

ժամտախոր (խաշնամահ) եւ հաւի խօլեռան, պէտք է ակնե-
րեւ ունենայ անասունի արիւնի մէջ որ եւ իցէ թունաւոր որդ-
(морозитъ): Եթէ անասունների ժամտախոր որդը եւս հաւի
խօլեռայի յայտնի ճանապարհով պատրաստովի մահաբեր որդից
կարելի կլինի դարձնել նախապահապանողական որդ, այն ժամա-
նակ ըստ անալօգիայի (երկու առարկաների նմանութիւնով)
կպատշաճի ընդունել թէ՛ համանման գոյափոխութիւն կարելի
է եւ սիրերական խոցի համար: Մէկ անգամ ձեր ուսումնա-
կան փորձեր անողներին կյաջողի ստանալ այն, որին Պատերա-
նունումէ սիրերական խոցի թուլացրած թոյն, այսինքն մէկ
անգամ նրանց կյաջողի հասցնել այդ ախտի որդը այնպիսի դը-
րութեան, որ ներս ածելով անասունի արիւնի մէջ, նրա վրայ չի
ցոյց տալ ոչ մի մահաբեր ներդործութիւն, սիրերական խոցը կը-
կորցնէ այն օրհասական, այն կորստական նշանակութիւնը ժո-
ղովրդական անտեսութեան համար, որ ունի ներկայ ժամանա-
կում: Նա կգաղարի ազգել այն դարձուրելի երկիւղը, որ այժմ
ազգումէ, եւ որի ազգեցութեան տակ ժողովուրդը շատ ան-
գամ բոլորովին հրաժարվումէ մտնել նրա հետ պատերազմ:
Նրա վրա (սիրերական ախտի) այլ եւս չեն մտիկ տալ ինչպէս
անյաղթելի թշուառութեան վրա: Սիրերական խոցի պատուա-
տելը՝ խելով ախտից նրա սուր բնաւորութիւնը, անելով նրան,
բազգատութեամբ առելով, անվնաս՝ մի եւ նոյն ժամանակ ա-
ւելորդ կգարձնէ այն ոտտիկանական (полициѣскій) կորանտի-
նի միջոցները, որոնցով հարուստ է ձեր բժշկական օրինամա-
տեանը, եւ որոնք խսկապէս ստոյգ չեն:

Սիրերական խոցերի Ռուսաստանում ծագման եւ տարած-
ման պատմութիւնը շատ ակներեւ կերպով ապացուցանումէ
մինչեւ այժմ գործադրած եւ նրա դէմ գործադրելի այժ-
մեան բոլոր ոտտիկանական միջոցների անճշտութիւնը: Ոտտի-
կանական միջոցները չպակասեցնելով եւ չթուլացնելով սիրե-
րական խոցերի մահաբեր ազգեցութիւնը, միայն առժամանակ
դադարացնում են նրան, այն էլ կլիմայական բարեկաշիւ պայ-
մանների ժամանակ: Բայց մէկ կամ մի քանի տարուանից յե-
տոյ, եւ երբեմն աւելի շուտ, նա դարձեալ նորոգվումէ, այն էլ
միշտ մի եւ նոյն տեղերի սահմանում, այսինքն Լատոգեան լճի
հարաւային եզերքում եւ Վօլխով գետի բարձր կողմերում:

այդ ախտի կորստաբեր հետեւանքը առաջուց հեռացնելու: Մենք չգիտենք իսկապէս թէ՛ ի՞նչպէս կարելի է դադարացնել ժանտախտի տարածուիլը եւ արգելել նորա ծագումը: Բայց մենք գիտենք ինչ եղանակով կարելի է ժանտախտին անվնաս անել: Այդ պատճառաւ խոհեմութիւնը պահանջումէ՝ որ մենք մեր ամեն ճիգը դարձնենք իրականացնելու հենց այդ վերջին նպատակը (ժանտախտի անվնաս կացուցանելն), որովհետեւ առաջինը իրականացնելը (ժանտախտի ծագումը եւ տարածուիլը կանխապէս ազդարարելը) մեր այժմեան գիտութիւնով հազիւ թէ մեզ համար կարելի կը լինի: Աւրիշ խօսքերով, ժանտախտային պատուաստը պէտք է առաջին տեղը բռնէ այն միջոցների կարգում, որոնք ձեռք են առնվում պատերազմելու ժանտախտի հետ: Իսկ միւս բոլոր միջոցները, որոնք սովորաբար պատուիրումէ անասնաբուժութիւնը, զոր օրինակ ժանտախտով վարակուած անասունների գիականների կաշին քերթել արգելելը, նրանց խոր թաղելը, կարանտինի հաստատելը եւ այլն, թէեւ ունին մէկ քանի գործնական նշանակութիւն, եւ թէպէտ դրանք հարկաւոր են առաւելապէս ժանտախտի սաստկանալու ժամանակ, այնու ամենայնիւ նոքա ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ օգնութեան առ-ժամանակեայ (պալլիքական) միջոց միայն, այլ ոչ ժանտախտը տրամադասիլ անող:

Առաջուց կարելի է ենթադրել թէ՛ այն եղրակացութիւնները, որ արել են Կաղզիացի հետազոտողները եւ փորձեր անողները (экспериментаторы, Թուսսէն, Պատտէր, Բու — Շամբերլէն), վերաբերվում են ինչպէս ժանտախտի բնաւորութեան, նոյնպէս եւ նրա աղբիւրներին եւ ամեն նրա հետ պատերազմելու կատարեալ միջոցներին: Իսկ թէ այդ եղրակացութիւնները պէտք է բուրրուին ստոյգ երեւին եւ ուրիշ ամենատեսակ վարակիչ ախտերի վերաբերութեամբ, այդ ենթադրութիւնը, ինչպէս յայտնի է ընթերցողներին, արդէն ճշմարտութեամբ «հաւի խօլեռա կոշուած» հիւանդութեան վերաբերութեամբ: Անհաւատալի ոչինչ չկայ, որ նրանք կճշմարտութիւն նոյնպէս եւ այն ախտին վերաբերութեամբ, որ պարբերաբար հարուածումէ յայտնի ժամանակի շրջաններում Ռուսաստանի մէկ քանի տեղեր եւ սրբ յայտնի է «Սիբիրական խոց» անունով (сибирская язва): Սիբիրական խոցը, ինչպէս եւ ծաղիկ հիւանդութիւնը, նոյնպէս եւ անասնոց

Սիրիւրիական խոյի մշտական պարբերաբար մի եւ նոյն աշխարհագրական սարդ գծագրած տեղերում երեւիլը աներկմիտ ապացոյցանումէ թէ՛ նրա ճճիի դարգանալու եւ բաղմանալու նպատակը պատճառը պէտքէ պարտել այդ տեղերի հոգային եւ կլիմայական պայմաններին մէջ: Քանի որ այդ պայմանները չեն փոխուի, ժանտախտի ծագման եւ տարածման առաջն առնելու բոլոր միջոցները յիշատակած տեղերում, ոչ մի հաստատուն հետեւանք չեն ունենալ: Խսի այդ հոգային եւ կլիմայական պայմաններին փոխելը ի հարկէ, կարելի գործ է, բայց միայն աւելի կամ պակաս հեռաւոր ապագայում: Բայց գեռայդ հեռաւոր ապագան չի գալ, ուստի սիրիւրիական խոյը, չնայելով ամենասատիկ բժշկական կանոնների բոլոր յօդուածների կատարելուն անգամ՝ առաջուայ պէս կգառնայ Վատոգեան եւ Վօլխովեան կողմերի սովորական չիւր, եւ առաւելապէս զարհուրելի երկիւղ կազգէ տեղական բնակիչներին, առաջուայ պէս կհամարուի գիւղականների կարծիքով «ստուածային բարկութիւն», որի գէժ՝ որ եւ իցէ միջոցներ առաջուց ձեռք առնելն անգամ մեղք է:

Ահա ինչու համար, կրկնումենք դարձեալ, թէ քանի որ կան կլիմայական հանգամանքներ եւ հոգային պայմաններ, որոնք նպատակուն սիրիւրիական ցաւի սնկիկի դարգանալուն եւ բաղմանալուն, թէ մասնաւոր անձինքների, եւ թէ ընկերական հաստատութիւնների ջանքերը պէտքէ ուղղուին ոչ առժամանակ ժանտախտը խաւանելու՝ ստտիկանական ճանտարհով միջոցներ գործադրելով, որքան պէտքէ հնար գործ դնել, նրան անվնաս կացուցանելու, որ ոչ մի իսկական վտանգ չծագի նրանով վարակուած անասունների առողջութեան եւ կեանքի համար: Իսկ հասնել այդ վերջին նպատակին կարելի է միայն նախապահանջողական օգնութիւնով — սիրիւրիական ժանտախտային պատուաստով:

Սակայն թոյլատրումէ՞ արդեօք սիրիւրիական անասնային ժանտախտը «հաւի խօրերայի» պէս առաջուց պատուաստ անել:

Այս հարցը իհարկէ պէտքէ լուծուի ոչ թէ տեսականապէս, այլ Հիմնած փորձերի վրայ: Եւ այժմ մեզ համար ամենից յարմար ամենից պատշաճական բոլէն է պարապել սիրիւրիական ախտի պատուաստի փորձեր անելով, որի համար թա-

արխիւնիւթ առձեռն պատրաստ շատ կայ, պէտքէ միայն ենթարկել նորան փութաջան եւ սաստիկ գիտնական արուեստական վերլուծութեան, հրահանգ առնելով այդ ժամանակ նոյն իսկ մեթօդները եւ չափերը, որոնք տուեցին ժամատախտային թոյնի վերլուծելու ժամանակ այնպիսի փառաւոր եւ հաւասար հետեւանքներ: ժամանակը, նիւթական միջոցները եւ աշխատութիւնը, որոնք անշուշտ հարկաւոր են այդ փորձերը անելու համար, կգործադրուին մեծ շահով, քան թէ այն ժամանակը եւ միջոցները, որոնք վառնվում են ներկայ ժամանակում զանազան ստիկանական — բժշկական միջոցները գործնականապէս իրականացնելու համար:

(Թարգմանից)

Զատարեան Տ. Զատարեանց:

ԼԶՄԻԱԾՆԻ ԲԱՆՆ ՈՒ ԲՐԻՉ:

«Հայաստանի սովը և Էջմիածին» անունով մի գրքոյի ձեռքս ընկաւ օրերս, հեղինակութիւն Արմենակ Սիւնիի, հետաքրքրութիւնս շարժուելով ծայրէ ի ծայր կարգացի, թէեւ առանց ախորժանքի եւ տխուր տպաւորութեան տակ, տեսնելով որ երբեմն մարդիք այնչափ գերի են լինում կրքի, մինչ բոլորովին կուրօրէն ուրանում են սպիտակի գոյնը եւ ամենայն ինչ սեւ մթութեան մէջ են տեսնում:

Ես նկատեցի, որ այդ գրքի ամբողջ նիւթն ու բառերն իսկ «Մշակի» առաջնորդող (ԴԷՊ Ի ԿՈՐՈՒՍՏ) յօդուածների կըրկնութիւն են, Արմենակ Սիւնիի կեղծ անուան ներքեւ: Թէեւ չարժէր այդ գրքոյի անհամեստ ու սանձարձակ լեզուագարութեան եւ ցնդաբանութեան պատասխանել եւ այն եւս Արարատի կամ Մեղուի պէս մի լուրջ թերթի էջերում, բայց որպէս զի ընթերցողները չկարծեն թէ՛ յիշեալ գրքոյի մէջ մի մազի չափ ճշմարտութիւն կայ, կամ նորա հեղինակը գէթ ճանաչում ու պատուումէ հրապարակախօսի ս. պարտքն եւ ըստ այնմ հանգէս գուրս եկած է մի ծառայութիւն անելու ազգին, գրիչ